ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2024 թվականի N ՑՊ-061-10/24

ք. Երևան

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ Թողարկող) 2024թ. հոկտեմբերի 02-ին ներկայացված հայտը 15,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, 6.25% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 150,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 07-ի եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 11-րդ գլխով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Օպերատորի Կանոնների 6-րդ գլխի 29-րդ կետը, 16-րդ գլխի 72-րդ կետը, և, ղեկավարվելով 15-րդ գլխի 68-րդ կետի 1-ին ենթակետով, ինչպես նաև Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.58.-րդ կետի 9.58.5. ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 15,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 48 ամիս շրջանառության ժամկետով, 6.25% տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքով, 150,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱ» ԲԲԸ կողմից շնորհվել է AMSWISB2OER7 տարբերակիչ ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված արժեթղթերին շնորհել **SWISBO** բորսայական հապավումը:
3. Հայտերի (առաջարկների) ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել ԱՄՆ դոլարով:
4. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
5. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հոկտեմբերի 16-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**